

9763



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«03» 09 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 181 - 24

Նախաձեռնող՝

« ԷՄՋԻԷՆ » ՍՊԸ

ք. Երևան, Եկմայան փող., 1/1 շենք, բն. 43

Գործունեությունը՝

Արարատի մարզի Արարատ համայնքի Արարատ
բնակավայրի տարածքում ձեռնարկվող կլինկերից
ցեմենտի արտադրություն
Արարատի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 181 - 24

«03» սեպտեմբեր 2024թ.

Արարատի մարզի Արարատ համայնքի Արարատ բնակավայրի տարածքում ձեռնարկվող կլինկերից ցեմենտի արտադրության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝

«ԷՄՋԻԷՆ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն,
նախագծային փաստաթուղթ
/Ա կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

Արարատի մարզ, Արարատ համայնք
Արարատ բնակավայր

Ներածական մաս. «ԷՄՋԻԷՆ» ՍՊԸ-ն նախատեսում է իրականացնել ցեմենտի արտադրություն Արարատի մարզի Արարատ համայնքի Արարատ բնակավայրի վարչական տարածքում: Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Երևան-Երասխ միջպետական ճանապարհի ձախ կողմում, Արարատ բնակավայրի մոտակա բնակելի տնից մոտավորապես 540մ հեռավորության վրա:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (<Օ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետի ա) ենթակետի, հանդիսանում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ (այն է՝ ցեմենտի կամ կլինկերի կամ կրի կամ գաջի արտադրություն՝ օրական 100 տոննա և ավելի):

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել Արարատի մարզի Արարատ համայնքի կողմից 2024 թվականի հուլիսի 19-ին տրված N163 ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

Հողամասի նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական է, գործառնական նշանակությունը՝ այլ հողատեսքեր: Հողամասի մակերեսը կազմում է 0.5 հա:

Նախատեսվող գործունեության նպատակն է արտադրել ցեմենտի տարբեր մակնիշներ՝ կլինկերի և այլ բաղադրիչների մեխանիկական խառնման և համասեռացման եղանակով:

Նախատեսվող գործունեության համար նախատեսված տարածքն ամայի է և չունի շինություններ, ծառեր, թփեր, խողովակաշարեր: Տարածքի անմիջական հարևանությամբ



անցնում է երկաթգիծը: Ցեմենտի գործարանի մոտեցման ճանապարհները 2 կողմից առկա միջհամայնքային ճանապարհներն են: Նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում: Հայցվող տարածքը եզրագծվում է ARM WGS-84 համակարգի հետևյալ կոորդինատներով՝

N	X	Y
1	8476686.8850	4409979.9142
2	8476621.1673	4410028.6155
3	8476590.1448	4409987.8412
4	8476638.3491	4409923.7998

Անմիջապես աշխատանքների իրականացման տարածքում հողային շերտը քարքարոտ է, տեղ-տեղ հանդիպում է հողի բերրի շերտ: Հողամասի 1200 մ² տարածքի վրա, որոշ մասերում բերրի հողաշերտը հանդիպում է մոտավորապես՝ 8-10սմ, որոշ մասերում՝ մինչև 20 սմ հաստությունների վրա: Ըստ նախնական հաշվարկների հանվող բերրի հողի ծավալը նախատեսվում է 240 մ³, որն ամբողջությամբ օգտագործվելու է ազատ տարածքների բարեկարգման և կանաչապատման համար:

Ընկերությունը նախատեսում է ձեռք բերել և տեղադրել բունկերներ, դոզավորող տարողություններ, սիլոսներ, ցիկլոններ, գոտիչներ և այլ արտադրական սարքավորումներ:

Նախատեսվում է տեղադրել աղացներ, ոռոտրային և ծնոտային ջարդիչներ: Հիմնական հումքատեսակը՝ կլինկերը, տեղափոխվելու է ավտոտրանսպորտային միջոցներով: Հումքի մատակարարման աղբյուրներ կհանդիսանան ՀՀ-ում գործող ընկերություններն ու Իրանի Իսլամական հանրապետության ընկերությունները: Սարքավորումները նախատեսվում է տեղադրել են բացօթյա տարածքում կամ մետաղական կառույցի մեջ /անգար/: Կապիտալ շինարարություն չի իրականացվելու:

Ցեմենտի արտադրության արտադրական հանգույցներն են.

1. Հումքի պահեստներ՝ շվաքարանի տակ,
2. Շնեկ - «Շ-1»,
3. Ցիկլոններ, ֆիլտրեր - «Ց-1»,
4. Մանրացնող սարք (աղաց) - «ՄՄ-1»,
5. Խառնիչներ - «ԽՄ-1»,
6. Ժապավենային փոխադրիչ - «ԺՓ-1»,
7. Նորիա, բաշխիչ հանգույց - «ԲՀ-1»,
8. Ջարդիչներ - «ՋՌ-2, ՋԱ-2»,
9. Բունկերներ,
10. Ցեմենտի սիլոսներ,
11. Տրանսպորտի շարժման ուղղություններ,
12. Ժապավենային փոխադրիչ կշեռքներ .

Առավելագույն արտադրողականությունը կկազմի՝ 25տ/ժամ, 24 ժամ/օր աշխատանքի դեպքում՝ 600 տ/օր: Տարեկան 10 ամիս՝ 300 օր աշխատանքի դեպքում՝ 132 000 տ/տարի:

Կլինկերը կոնտեյներներով կամ բեռնատարներով նախատեսվում է տեղափոխել գործարանի տարածք և պահեստավորել փակ տեսակի բունկերների մեջ: Ընդամենը տեղադրվելու են 3 բունկերներ, որոնցից մեկը կլինկերի համար է, մեկը գիպսի և մեկը հավելանյութի համար:



Գիպսը և այլ նյութերը նախատեսվում է տեղափոխել պարկերով կամ բեռնատարներով: Բունկերների ստորին մասում տեղադրվելու է կշեռք-փոխակրիչ: Յուրաքանչյուր բունկերի համար նախատեսված է չափիչ-տարողություն: Ըստ տվյալ տեսակի ցեմենտի բաղադրության կշռվում են կլինկերի, գիպսի և հավելանյութերի համապատասխան քանակները և կշեռք-փոխակրիչը դրանք տեղափոխում է խառնման բունկեր: Ելնելով ցեմենտի տեսակից (մակնիշ) կլինկերի պարունակությունը կարող է տատանվել 60 – 90 % սահմաններում:

Բունկերից խառնուրդը ինքնահոս տրվում է սկզբից ռոտորային ջարդիչ, որից հետո ծնոտային ջարդիչ և մանրացված զանգվածը ժապավենային փոխակրիչի միջոցով տեղափոխվում է խառնիչ: Խառնիչը փակ տարողություն է, որը կահավորված է թիակներով: Համասեռացված ցեմենտային խառնուրդը հոսում է աղաց, որտեղ վերջնականապես կլինկերը մանրացվում է մինչև փոշենման վիճակի, որից հետո շնեկի միջոցով պատրաստի արտադրանքը լցվում է սիլոսների մեջ: Տարածքում նախատեսվում է 2 սիլոս: Յուրաքանչյուր սիլոսը նախատեսված է ցեմենտի որոշակի տեսակի համար: Սիլոսներից ցեմենտը տրվելու է առաքիչների բեռնատար մեքենաների մեջ, կամ տարայավորվելու է պարկերի մեջ:

Հիմնական փոշեառաջացման հանգույցները՝ ջարդիչները, խառնման բունկերն ու աղացի հոսքագիծը կահավորված են լինելու փոշեկլանման համակարգով: Համակարգը բաղկացած կլինի մեկ թևքային զտիչից: Մաքրված գազային խառնուրդն օդամղիչի միջոցով արտանետվելու է մթնոլորտ 0.12 մ տրամագծով և 20 մ բարձրությամբ խողովակով: Թևքային զտիչներում որսված ցեմենտի փոշին ամբողջությամբ վերադարձվելու է սիլոսներ:

Անօրգանական փոշու արտանետումների քանակը տարեկան կկազմի 1,12 տ/տարի:

Հիմնական տեխնոլոգիական գործընթացները տեղի կունենան երկու ջարդիչներում և մեկ աղացում: Միաժամանակ մեկ հոսքագծով հաջորդաբար աշխատելու է մեկ ջարդիչ և մեկ աղաց, պարբերաբար փոխելով ջարդիչները, կախված հումքից:

Պատրաստի արտադրանքի փաթեթավորման և բեռնատարների մեջ բեռնման ընթացքում առաջանալու են փոշու արտանետումներ: Արտանետումների տարեկան քանակն արդյունքում կկազմի. 1.27 տ/տարի:

Նախատեսվող գործունեության արտադրական կարիքների համար ջուր չի նախատեսվում և համապատասխանաբար արտադրական արտահոսք նույնպես չի լինի: Տարածքում ջուրն օգտագործվելու է միայն աշխատողների խմելու կենցաղային նպատակների համար: Ջուրը բերվելու է Վեոլիա ջուր ՓԲԸ-ի քաղաքային ցանցից ջրատար մեքենաներով և պահեստավորվելու է տարածքում նախատեսվող տարողություններում՝ համապատասխան պայմանագրի:

Ինչպես նշվել է, գործարանում արտադրական արտահոսք չի առաջանու, կենցաղային կեղտաջրերի ծավալը կկազմի միջին օրական՝ 1.07 մ³/օր: Սկզբնական փուլում կեղտաջրերի հավաքման համար կօգտագործվի տարածքում նախատեսվող կեղտաջրերի հավաքման անթափանց պատերով և հատակով հորը: Հորի պարունակությունը պարբերաբար կտեղափոխվի մոտակա կոյուղու ցանց Վեոլիա ջուր ՓԲԸ-ի հետ պայմանագրի համաձայն: Հետագայում նախատեսվում է տեղադրել բիոզուգարաններ:

Ցեմենտի արտադրության նախատեսվող տեխնոլոգիան թույլ է տալիս կազմակերպել անթափոն արտադրություն, քանի որ բոլոր ավելցուկները, կամ կարծրացած կտորները նորից խառնվելու են հումքի հետ և տրվելու են ջարդիչներ, ապա աղացներ: Թևքային զտիչում որսված ցեմենտի փոշին տրվելու է սիլոսներ:

Արտադրական թափոններ առաջանալու են միայն թևքային զտիչների հանգույցում:



Հոսքագծի յուրաքանչյուր անջատման ժամանակ կատարվելու է գտիչների հանգույցի արտաքին զննում և խոտանված պարկերի հայտնաբերման դեպքում դրանք փոխարինվելու են նորերով: Տարեկան հաշվարկային քանակը՝ 1.2 տ, իսկ խոտանվածները հավաքվելու են արտադրական մասնաշենքի առանձնացված վայրում: Փորձաքննական դրական եզրակացություն ստանալուց հետո, ընկերությունը կմշակի թափոնի անձնագիր և կներկայացնի ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն հաստատմանը:

Կենցաղային թափոնի տարեկան առավելագույն ծավալը նախատեսվում է 16 մ³: Կենցաղային աղբը և խոտանված պարկերը Արարատ համայնքի աղբահանությամբ զբաղվող ընկերությունների միջոցով տեղափոխվելու է համապատասխան աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով:

Աղմուկի մարարդակը արտադրական շինության մեջ նախատեսվում է 55-60 դԲա, շինությունից դուրս աղմուկը չի գերազանցի 50 դԲա-ը: Գործարանում չկան թրթռում առաջացնող սարքավորումներ:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

Արտադրական գործընթացում օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված է՝

- ցեմենտի արտադրության հոսքագիծը կահավորել բազմաստիճան մաքրման հանգույցով,
- բոլոր արտանետումներն ուղղորդել մեկ խողովակում, այնուհետև մաքրել գազամաքրման համակարգում,

- պարբերաբար իրականացնել բանվորական միջավայրի, արտադրական հանգույցի արտանետումների մոնիթորինգ և անհրաժեշտության դեպքում իրականացնել սարքավորումների կարգաբերում,

- հումքի պահեստավորումն իրականացնել այնպես, որպեսզի բացառվի դրանց շփումը անձրևաջրերի հետ,

Հիմնական հումքատեսակների ժամանակավոր պահման համար կազմակերպությունում նախատեսվում է առանձնացնել բետոնապատ հատակով հատուկ տարածք: Ժամանակավոր պահման հատուկ տարածքը պետք է պաշտպանված լինի մթնոլորտային տեղումներից և այլ գործոնների ուղղակի ազդեցությունից՝ քամի, արևի ճառագայթներ և այլն:

- Նախատեսվում է սպասարկող անձնակազմի համար համապատասխան դասընթաց և պարբերաբար հրահանգավորվում հումքատեսակների ընդունման և պատշաճ կերպով պահեստավորման հարցերով:

Ընկերությունը նախատեսում է իրականացնել տարածքի կանաչապատման աշխատանքներ: Տարածքի հյուսիս-արևմտյան, հարավարևմտյան և հարավ-արևելյան եզրերով տնկվելու են բարդիներ: Բարդիների շարքերի երկայնքով կկազմակերպվի խոտածածկ գոտի, ընդամենը՝ 1110 մ² մակերեսով: Հողամասի միջնամասում կկազմակերպվի ծաղկանոց՝ 400 մ² տարածքի վրա:

Աշխատողներին նախատեսվում է տրամադրել անձնական արտահագուստ և անհատական պաշտպանական միջոցներ:

Արտադրական հանգույցն ապահովվելու է հրդեհային անվտանգության պարագաներով /կրակմարիչներ, բահեր և այլն/:



Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված մշտադիտարկումները:

Շրջակա միջավայրի վրա ցեմենտի արտադրության ազդեցության մակարդակը իրատեսորեն գնահատելու նպատակով իրականացվելու է փոշու պարունակության չափումներ: Արտադրության գործարկման փուլում չափումները կիրականացվեն շաբաթական պարբերականությամբ, տեխնոլոգիական գործընթացների կայունացումից հետո չափումները կիրականացվեն եռամսյակային, նաև արտապլանային՝ մերձակա բնակչության բողոքների դեպքում: Նույն հաճախականությամբ և նույն կետերում նախատեսվում է կատարել աղմուկի մակարդակի չափումներ: Չափումները կիրականացվեն մասնագիտացված կազմակերպության կողմից պայմանագրային հիմունքներով:

Գործունեության իրականացման տարածքից 130-150մ հեռավորության վրա գտնվում է “Աղակալած ճահճուտ” բնության հուշարձանը, որի պահպանության համար նախատեսված է.

-մուտքի ճանապարհը և տրանսպորտային միջոցների երթևեկությունը կազմակերպել հուշարձանի հակառակ կողմից,

-դեպի հուշարձան՝ արտադրական տարածքի հարավարևելյան կողմում տնկել բարդիներ՝ պատնեշ ստեղծելով այդ ուղղությամբ ազդեցությունը նվազեցնելու նպատակով,

Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի համար նախատեսված ծախսերը կկազմեն՝ 840000.0 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով, Արարատի մարզի Արարատ համայնքի Արարատ բնակավայրի տարածքում ձեռնարկվող կլինկերից ցեմենտի արտադրության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ Արարատի մարզի Արարատ համայնքի Արարատ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, Արարատի մարզպետարանը: Փորձաքննական գործընթացում հաշվետվության վերաբերյալ ստացվել են կարծիքներ, դիտողություններ և առաջարկություններ, որոնք հաշվի են առնվել լրամշակված հաշվետվությունում: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

Շինաշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել գնահատման հաշվետվությունում ներկայացված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարելու դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ բնապահպանական նորմերն ապահովելու նպատակով:



-Արտադրական գործընթացի կազմակերպումն ու շահագործումն իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համաձայն՝ պահպանելով աշխատանքային անվտանգության կանոնները, բանվորների արտահագուստի և հիգիենայի պահանջները:

-Մինչև գործունեության իրականացումը, անհրաժեշտ է կատարել գործունեության իրականացման տարածքի հողերի նպատակային նշանակության փոփոխություն:

- Շինարարական, շահագործման աշխատանքների ընթացքում առաջացող աղբի և թափոնների հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

- Անհրաժեշտ է գործունեությունն իրականացնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրի համաձայն:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«ԷՄՋԻԷՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արարատի մարզի Արարատ համայնքի Արարատ բնակավայրի տարածքում ձեռնարկվող կլինկերից ցեմենտի արտադրության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝

Գոհար Մինասյան